

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم عام

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈԼԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 42

1899 ՅՈՒՆՈՒԱՐ 9

Ամեն Տեղի համար Տարեկան կանխիկ **50** դահեկան, վեցամսեայ **26**, իսկ եռամսեայ, **13** դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ **15** Գրան: Թղթատարի ծախսը հմբագրութեան կը վերաբերի: Հասը **40** փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդու-
նուի **100** դրուէի Տեղ **105** դրուէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Կարևոր ակնարկութիւն մը:

Ղ. ԲՈԼԱՏ.— Ճարտարարուեստական. ներկարարութիւնը: Կտաւ:

Ս. ԹԱՊԱՔԵԱՆ.— Թուրք բանաստեղծութիւն. Ֆիթնէթ Հանըմ:

Ղ. ԲՈԼԱՏ.— Շերամարուծութիւնը Բասթօռետն դրութիւնով. Մակարուծային Փոխան-
ցիկ հիւանդութիւններ:

ՄԱՏԱԹ.— Առողջապահական նօթեր. Միախոտի գործածութեան վնասները:

Ղ. ԲՈԼԱՏ.— Թարմ կարագի անվթար պահպանումը. Հարցում թիւ 67 և Պատասխան:

ՏԱՆՏԻԿԻՆԸ.— Խոհանոցի Բաժինը:

Տ. ՊՕԶԱՃԵԱՆ.— Գիտական Խնդիրներ:

Ազգային լուրեր.— Նուսար Փաշա:

Թղթակցութիւն, Ազդ Լէն.

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԱԳՐՈՐ Պ. ԳԱՅՍԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պոստ - Այի Ճատտէսի, Թիւ 4

Նոր Տարւոյ առթիւ Հանրադիտակի յարգոյ Գործակալներու և Բաժանորդներէ մեզ ուղղուած համակրայիւր Գրութեանց և Այցեքարտերու մասին մեր շնորհակալիքները կը ներկայացնենք փոխադարձաբար:

Շքոտարա. — Միհրան էֆ. Գալիամանեան. — Նամակնիդ ստացած ենք շնորհակալութեամբ, և բաժանորդ որձանագրած:

Կիրասան. — Արմենակ էֆ. Սօմունեան. — Ստացած ենք նամակնիդ. ողջերթ կը մաղթենք Ձեզ, կը գրենք Յարութիւն էֆ. Էվլէնեանի:

Մալկարա (Գործակալ). — Տիմէթոքաթերթերը կը զրկուին:

Ազէհէիր. — Գ. Էօլմէզեան էֆ. — Ձեր խնդրած Հնդկադական Նախալեզուն և Էտիբեանի Մանկական Երգերը կը զրկուին:

Ատաբազար. — Ստացած ենք առաքումնիդ. առանգը յանձնեցէք Բիւզանդիոնի: Ուղած էիք Հանրադիտակի թիւերէն մէկ 28, երկու 29 և մէկ 33, զորս կը զրկենք, ինչպէս և նոր բաժանորդներունը:

Մալթիա. — Թիֆթիքեան էֆ. — Ստացած ենք նամակնիդ. անհոգ եղիք, Ձեր յուսացածէն աւելի ընդարձակօրէն պիտի գրուի ներկարարութեան վրայ. Ձեր հարցումներուն պատասխանը պիտի գտնէք՝ ներկարարութեան դատընթացքի շարունակութեան մէջ, կատարելապէս գոհ պիտի մնաք. քանի որ ներկարարութեան վրայ խիստ շատ հարցումներ ընողներ կան, և եթէ ամէնուն ալ զատ զատ պատասխանել պէտք ըլլայ, այն ատեն պիտի պարտաւորինք Հանրադիտակի ամբողջ էջերը ներկարարութիւնով լեցնել. առ այժմ պէտք էք գոհանալ մեր ուղղութենէն, որ իր շարունակութեան մէջ խիստ շահեկան աեղեկու-

թիւներ պիտի պարունակէ. մեր նպատակն է՝ ներկարարութեան արհեստը հիմնովին սովորեցնել ժողովուրդին երկրին ծառայութիւն մը մատուցած ըլլալու յոյսով: Ոչ միայն ամէն տեսակ ներկերու բաղադրութիւնները և գործածութիւնը պիտի սովորէք, այլ նաև սա կամ նա գոյնի երանգները ինքնին ստեղծելու, յարմարցնելու կերպերը: Միայն ջանացէք դուք շատ բաժանորդ գտնալ. պայմանաւ որ ԿԱՆԹԻԿ վճարողներ ըլլան. ապառիկ թերթ չենք զրկեր. երբ շատ բաժանորդներ առնենանք, այն ատեն մենք ալ ներկերու «մատէլ»ները, ինչպէս կ'ըսէք Ձեր նամակով, թերթիս մէջ կը գնենք իրենց գոյներով:


Մալթիա. — Արթ. Տ. Վահրամքչյ. — Հաճութեամբ կը զրկենք Ձեր վարժարանին թերթ մը, պայմանաւ որ Դուք ալ փոխարէն ջանաք թերթս տարածել Ձեր քաղաքը. ի մօտոյ կը գրենք:

ՏԲԴ. Բ. ՉԻԼԻՆԿԻՐԵՄԻՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ-ԿՆԱՆՏԱՐՈՅԺ, ՄԱՍՆԱԳԵՏ

ՋԱՅՈՒՆ ՀԻԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Որ իր երկար փորձառութեամբ ծանօթ է, մի քանի տարիէ ի վեր ուսումնասիրութիւններ կատարելէ զկնի ի Բարիզ, դարձած է մայրաքաղաքս. հաստատելով իր բնակութիւնը Բերա Մէքթէպ-Պայրամ-Փողսց. թիւ 29, ուր ամէն օր կէս օրէ վերջ հիւանդ կ'ընդունի: Մասնաւորապէս կ'դարմանէ կնոջական և ջղային ամէն հիւանդութիւններ: ԵՇ. նոյն ժամուն ճրի կը դարմանէ կարօտեալները: Ելեքտրաբուժում ամէն տեսակներով, մասնաւոր քննութիւն Ռէնօթկէնիան մեքենայով:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՐԱՌԳՐԱՊԵՏ - ՏՆՈՐԷՆ

Ղ. ՐԱԼԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 42

1899 ՅՈՒՆՈՒԱՐ Թ

ԿԱՐԵԻՈՐ ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՍԸ

Ամէն անգամ որ, գաւառներէն խումբադրութեանս ուղղեալ նամակներու ծրարներ կը բերէ մեզ թղթաբերը, ամէնէն առաջ այդ նամակներու ծանրութիւնը շօշափելու հարկին տակ կը դրանաինք, սա յոյսով թէ հոն մեր անհոգ բաժանորդաց (ակնարկութիւննիս վճարողներու համար չըլլալը կը հասկցուի անշուշտ) մինչեւ ցարդ անվճար թողուցած բաժնէգնոց փոխարժէքը գանելու անակնկալը պիտի ունենանք: Բայց ո՞րչափ յուսախաբ կ'ըլլանք, երբ մեր այս ակնկալութեանց փոխարէն կը գտնենք անոնց մէջ հարցում, լուծում (նորէն կ'ըսենք, խօսքերնիս վճարողներու համար չէ) շնորհակալիքներ, փաղաքշանքներ, և աւելին՝ յանձնարարութիւններ, առանց իսկ մտածելու թէ, բաժնէգինը չի վճարած յանձնարարութիւն մ'ալ ընել, անտեղի ըլլալէն զատ ձանձրալի իսկ կ'ըլլայ: Ասոնք՝ թերթիս մատակարարութեան մասին՝ տասներորդական աստի-

ճանի կարեւորութիւն ունեցող պարագաներ են: Այսպիսի բազմաժախտ թերթի մը հրատարակութիւնը, ամէն շաբթու դրամական կանխիկ և անմիջական վճարումներու կը կարօտի. և այս մասին՝ մեր յոյսը աւելի հեռուոր բաժանորդներու վրայ դրած ենք. որովհետեւ՝ Պուլսոյ բաժանորդները մօտ ըլլալով, ուզած վարկեաննիս կը դիմենք և կը գանձենք անոնց բաժնէգինները դիւրութեամբ: Եւ թէ մեր գուտաւայի բաժանորդները այնպէս կը կարծեն թէ, թերթիս ու է մէկ յօգուածին տակ դրուած զեկոյցները իբր սովորական յայտարարութիւն մը, զարդ մը, կամ աւել լեցնելու կը ծառայեն, և այդ գաղափարով տնհոգ և անտարբեր կը դառնան, շատ կը սխալին. և կամ եթէ կը կարծեն թէ մենք դրամական մեծ ուժով այս թերթի հրատարակութեան ձեռնարկած ենք, կուգանք միանգամ ընդմիջա յայտարարել այդպիսիներուն թէ՛ իրենց այս կարծիքը բոլորովին սխալ է. մենք պէտք ունինք, և անհրաժեշտ պէտք ունինք բաժանորդաց աջակցութեանը. անոնց վճարումներով է

որ պիտի կարողանանք պահել մեր թերթին գոյութիւնը. մինչև իսկ եթէ դրամական մեծ ուժով սկսած ըլլայինք այս հրատարակութիւն, երբ բաժանորդներ իրենց պարտքը չի վճարեն, ի՞նչպէս կը յուսար որ թերթը յարատեւէ: Ուստի՝ կը խնդրենք մեր բոլոր աջակից բարեկամներէն, որ՝ եթէ կը փափաքին Հանրագիտակի գոյութիւնը ապահովելու տեսել, իրենց բոլոր ուշադրութիւնը այդ էական կէտին վրայ դարձնեն: Գործակալներ՝ իրենց բաժանորդները, բաժանորդներ՝ իրենց բարեկամները համոզելու են, որ ժամանակին իրենց վճարումները կատարեն, առանց մեր գեկուցումներուն սպասելու: Եւ անոնք որ չեն ուզեր վճարել, թող մինչև ցարդ ստացած թերթերնին ետ ղրկեն մեզի, որպէս զի մենք ու իրենց անունը աւերելով մեղադարէն, հասկնանք թէ, իրապէս մեր թերթէն շահագորդուող քանի՞ բաժանորդներ ունինք, և քանի՞ թերթ տպելու ենք, թղթատարի որչա՞փ ծախք պիտի ունենանք իւրաքանչիւր շաբթուն, և ըստ այնմ կարգադրենք մեր պիւստէն: Ահա այս կերպով, այս տեսակ տալու կայի հոգերէ ազատելով, խմբագրութիւնս ալ կարող ըլլայ, և աւելի արամադրելի ժամեր ունենայ, իր ընթերցողներուն հետզհետէ ալ աւելի կարեւոր և օգտակար պարունակութիւններ մատակարարելու, փոխանակ՝ թէ՛ այսպիսի խմբագրականներով, և թէ՛ սովորական գեկոյցներով գլուխ ցաւցնելու, որոնցմէ անշուշտ պարտաճանաչ բաժանորդները գոհ չեն մնար:

Եթէ տակաւին կան այնքանիսի բաժանորդներ, որոնք թերթիս յարատեւութենէն կասկածելով, և վախճալով որ գրամին վրայ կերթայ, իրենց պարտքը չեն ուզեր ղրկել մեզ, այսօր՝ որ 42րդ թիիլ հրատարակուած է, և չլմանք լրբանալու միայն 10 թիւի պէտք կայ, թող իրաւախոհ ընթերցողը ինք դատէ այդպիսիները: Այս պարագան՝ կը շեշ-

տենք մանաւորապէս այն կարգ մը բաժանորդաց, որոնք նամակ մը կը ղրկեն մեզ, որու պարունակութիւնը կա՛մ յանձնարարութիւն մ'է, կա՛մ հանելուկի լուծում մը, հարցում մը, և այլն, և իբր թէ յիշեցնելու համար մեզ որ, իրենց պարտքը չեն մոռցած, կը յուսարեն զմեզ՝ յաջորդ թղթատարով ալ բաժնէգինը ղրկել՝ մէկ քանի շաբաթներ կ'անցնին, մենք ալ առդին անհամբեր կ'սպասենք որ, էֆէնտիին կամըը պիտի ըլլայ և մեր բաժնեգինը պիտի բարեհաճի ղրկել. և ահա նամակ մը ևս նոյն պարունակութեան մօտ վեր ի վերոյ, և կամ բոլորովին լուրթիւն: Այն ատեն յուսալիս ըլլանք կը հասկնանք, եւ կը շուարինք թէ ի՞նչ ուղղութիւն բռնել պէտք ենք այդպիսիներուն դէմ: Ատոնց ամենուն զատ զատ նամակ գրել՝ թէ՛ աւելորդ ծախք մ'է մեզ համար և թէ՛ ժամանակի մեծ կորուստ. թերթին միջոցաւ հրաւեր կարգաւ ուղղակի իրենց՝ Արժանապատուութիւննին կը վերաւորի. ուրեմն այդպիսիները թող իրենք ցուցնեն մեզի միջոց մը, որ միանգամ ընդ միշտ վերջ տանք այսպիսի անպատեհ գրութիւններո՞ւ, մանաւանդ, ո՛չ իրենց համար պատուաբեր է, և ո՛չ ալ թերթ մը այդ կերպով կրնայ յարատեւել:

Մեր կողմանէ թող իբր վերջին գեկոյց նկատեն այդպիսիները մեր այս գրութիւնը, և չի պարտաւորեցնեն աւելի տարբեր կերպով գրելու: Այս թերթը ՎԵՐՋԻՆ, ԱՆԳՍՏՐԵՍԻՆՈՎ կը ղրկենք իրենց բաժնէգինը չի վճարող բաժանորդներուն, և այն ատեն կ'ստանան շարունակութիւնը, երբ բաժնէգինը ամբողջ ղրկեն մեզ:

Միանգամ ընդ միշտ կը ծանուցանենք նաեւ թերթիս նոր բաժանորդ գրուողներուն ալ, թէ՛ առանց բացառութեան պէտք է իրենց բաժնեգինը ղրկին. ապառիկ թերթ չենք ղրկեր. նոր բաժանորդ գրուողը պէտք է բաժնեգինը մէկտեղ ղրկէ:

ՀԱՐՏԱՐԱՐՈՒՆԵՍՏԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

(Դարձակ-ի. Գր. Բե- 41)

ՊԱՂ. ՋՈՒՐԻ ՄԷՋ ԹՐՋՈՑ. — Կառավարող ցուղուններու թիւերը, որոց «վուշ» անունը կուտան, վատերու համար, վաղու ջուրերը՝ թրջոցի համար ամենէն յարմարագոյններն են. որովհետեւ՝ քանի խմորումը յառաջ երթայ, ցուղուններուն մէջի գունաւոր և մածուցիկ (փակչող) նիւթերն ալ հալելով ջուրին կը խառնուին և կ'երթան Միայն թէ՛ ջուրը պէտք է անուշ ըլլայ, մաքուր և մանաւանդ երկաթի բաղադրութիւններ չի պարունակէ իր մէջ, որոնք վուշը փոխանակ ճերմկեցնելու, դեղին, թուխ եւն, գոյն մը կուտան անոր:

Մնայուն ջուրերու մէջ գործողութիւնը աւելի չաւտ կը կապարուի, ջուրի բարեխառնութիւնը աւելի բարձր ըլլալուն համար, այսինքն՝ աւելի տաք քայքայ խմորումով անոջ ջատուած նիւթերը նեխելով (հոսիլ), գարշահոտ կոպեր կ'արտաբերեն, որոնք՝ թէ ուղղութեան վնասակար են և թէ անտանելի: Ընդհանրապէս ընթարձակ տարածութեան վրայ կաւաւատ ցանուած տեղեր, ուր թրջոցի գործողութիւնը մնայուն ջուրերու մէջ կը կատարուի, ընդհատական տեղեր (սրթմա) անպակաս կ'ըլլայ: Վաղու ջուրերու մէջ կատարուած թրջոցէն ալ թէև ընդհատական տեղէն յառաջ կուգայ, բայց ոչ այնչափ սաստիկ: Մինչև իսկ, թրջոց կատարուած ջուրերուն մէջ գտնուող ձուկերը կ'ոչնչանան: Ահաւասիկ թէ ինչպէս կը կատարուի թրջոցի գործողութիւնը:

Ջուրին մէջ փայտէ վանդակներ (քաֆէս) կը պատրաստեն խոշոր սնտուկներու ձեւով. կտաւատի ցուղունները խուրձ խուրձ կը վետեղեն վանդակներուն մէջ, իրարու քով ուղղահայեաց կերպով, ցուղուններուն գլուխը դէպի վեր: Վանդակները պէտք է ջուրին տակ ծածկուած ըլլան, և այս պատճառաւ, ցուղունները վետեղելէ վերջը վրանին տախ-

տակներով կը ծածկեն, և անոնց վրայ ալ խոշոր քարեր դնելով՝ ջուրին տակը կ'ընկղմեն, և անշարժ մնալու համար ալ, ցիցերով ջուրին յատակը կ'առնան: Մէկ քանի օրէն խմորումը կ'սկսի, և որչափ շարունակէ՝ պէտք է մերթ ընդ մերթ վրայի ծանրութիւնները աւելցնել, որպէս զի՝ կապերու արտադրութեամբ թեթեւալով, անտուկները ջուրէն վեր չի բարձրանան: Ընդհանրապէս 2—3 օր թրջոց դնելէն վերջը, անգամ մը ջուրէն դուրս կը հանեն, խուրձերը իրարու վրայ կը դիպեն խաչաձև կերպով, որպէս զի մէջտեղերին բաց մնալով չորնան: Այս գործողութենէն վերջը կրկին վանդակներուն մէջ կը վետեղեն և ջուրին մէջ կ'ընկղմեն, մինչև որ թրջոցի գործողութիւնը լրանայ: Ջուրին բարեխառնութեան մաքրութեան, և կտաւատի տեսակին համեմատ, թրջոցի գործողութիւնը կը տևէ 10—20 օր: Բայց՝ գործողութիւնը պէտք է ճիշդ ժամանակին ընդհատուի, որովհետեւ, եթէ աւելի կանուխ ջուրէն դուրս հանուին, վուշը թէ՛ խակ կը մնայ և թէ՛ աղէկ չի դատուիր. խակ եթէ ժամանակը անցած ըլլայ, այն ատեն թէ գոյնը աղտոտ կ'ըլլայ և թէ՛ թիւերը դիմացկուն չեն ըլլար: Ահա այս պատճառաւ պէտք է մերթ ընդ մերթ ցուղուններուն վիճակը քննել, թրջոց դրուելէն 5—7 օր ետքը, օրը 3—4 անգամ: խուրձերը պէտք է կախուցած ըլլան, և ցուղուններն ալ կանաչագոյն, ու մածուցիկ նիւթով մը ծածկուած. և երբ այդ ցուղուններէն մին բխումատի և ցուցամատի մէջտեղ սահեցնենք, պէտք է այդ մածուցիկ նիւթը դիւրութեամբ գտնուի. և երբ այդ ցուղուններէն մին չորցնելով՝ մէջտեղէն ծռենք, մէջի փայտեղային մասը արմուկի պէս կեղեւէն դուրս ցցուելու է: Կեղեւը բացած ատեննիդ՝ պէտք է թիւերը դիւրութեամբ իրարմէ գտնուին:

Երբ այս վիճակին հասած ըլլան, այն ատեն խուրձերը անգամ մը ջուրին մէջ լուսով, մարգագետնի մը վրայ կը փռեն, և ամէն օր կը դարձնեն, որպէս զի թէ՛ չորնայ և թէ՛ ցոլի ազդեցութեան տակ ճերմկանան: Բայց այս գործողութեան համար, խուրձերը կը քակեն և այնպէս կը տարածեն մարգագետնին վրայ, որ չորնողէ վերջը կրկին խուրձ խուրձ կը կապեն, և այնպէս կ'ամրապեն:

Մնայուն ջուրերու մէջ գործողութիւնը

աւելի չուտ կը կատարուի, ինչպէս վերը Ե-
սինք. որովհետեւ ցողուններէն գատուած յո-
րինուածային Նիւթերը ջուրին մէջ նետելով,
խոնրումը աւելի չուտ յառաջ կը տանին, եւ
այս կերպով ջուրին տաքութեան աստիճանը
կը բարձրացնեն: Ասիկա գիտնալով, Իռլան-
տայի եւ Ռուսիայի մէջ շատ տեղեր, հետե-
ւալ միջոցը կը գործածեն, եթէ իրենց մշա-
կութիւնը գետի մը եզերքը կը կատարուի:
Առ այս՝ գետափանց վրայ աւազաններ կը շի-
նեն, եւ գետին ջուրը մէջը կը կապեն. աւա-
զաններու վարի ծայրէն պզտիկ անցք մը կը
ձգեն, ուրկէ ջուրը դանդաղօրէն կը հոսի
էջերթայ: Միայն թէ այս պարագային ու-
շտըրութիւնը պէտք է կ'կնաւորատիւ, որով-
հետեւ խոնրումը այնչափ չուտ յառաջ կ'եր-
թայ, եւ այնչափ ուժով կ'ըլլայ, որ կտաւա-
տի թելերը կը խամրեցնէ եւ կը տկարացնէ:
Հոս ալ թրջոցի գործողութիւնը լրանալէն
վերջը ցողունները կը տարածեն նոյնպէս մար-
գաքեղնին վրայ:

ՅՈՂԻ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՄԲ ԹՐՋՈՑ. — Այս
միջոցը կը գործածեն այն տեղուանք, ուր
ջուր չի գտնուիր: Կտաւատի ցողունները
պարզապէս կը տարածեն դաշտին կամ մար-
գաքեղանի մը վրայ 6—8 շաբաթ: Գործողու-
թիւնը լաւ յառաջ երթալու համար, օդը խո-
նաւ ըլլալու է. հակառակ պարագային ցո-
ղունները չորնալով՝ խոնրում տեղի չունենար:
Յօղի ազդեցութեամբ թրջոց եղած կտա-
ւատի թելերը, թէ՛ գունաւոր կ'ըլլան եւ թէ՛
տկար, հետեւաբար նուազ յարգի:

Թրջոցի գործողութիւնները գիւրացնելու
համար, շատ մը միջոցներ առաջարկուած են
թէ եւ, բայց ասանցմէ եւ ոչ մին գործածու-
թեան մէջ մտած է տակաւին, սուղ եւ ժուար
ըլլալուն համար: Ինչպէս են Շէնքի առա-
ջարկած տաք ջուրի թրջոցը. ջուրը տաք-
ցնելու համար, փայտի կտուռ մծուխի ծախք
մը կ'աւելնայ, որով գործողութիւնն ալ տեղի
կը նստի: Պօռ տուաջարկած է քիմիական հա-
կադակներով թրջոց ընել. ինչպէս՝ կանաչ
օճառ, ծծմբական թթու, կամ նատրոնի ծը-
ծմբոտ կայլին: Բայց հոս ալ թէ՛ ծախք մը
կ'աւելնայ, եւ թէ՛ գործողութիւնները կը
դժուարանան: Հետեւաբար եւ անգործադրե-
ի: Տօնիէ կ'առաջարկէ ջրաշուկով թրջոց Ե-
նել, որ նոյնպէս անգործադրելի մնացած է:

Սուպէյրան, փորձած է որ, կտաւատի ցո-
ղունները, 3 օրի չափ 32 հարիւրարդի (սափ-
դիկրատ) աստիճան գաղջ ջուրի մէջ թրջոց
դնելով՝ թելերը կատարելապէս կը բաժնը-
ւին. այս միջոցը կը գործածուի այժմ Իռլան-
տայի մէջ մէկ քանի տեղեր: Միւս բոլոր
գրութիւններուն վրայ սա առաւելութիւնը
ունի, որ գարշահոտ կաղեր չ'արտաբերեն,
եւ արտադրած վուշն ալ առատ կ'ըլլայ:

ՏՐՈՐՈՒՄ. — Այս գործողութիւնով ցո-
ղունին կեդրոնի փայտեղային մասը կտոր-
տելով կը փշրեն մասնաւոր գործիքով մը, որ
կը նմանի ատամնայեւ (տիշի) թակի ձեւ-
մաք) մը: Եւրոպայի մէջ այս գործողութիւնը
կը կատարեն այժմ մեքենայով, որ կ'աշխատ-
է 4—5 զոյգ երկաթեայ ատամնային գլան-
ներով (սիլինտր) :

ԹԱԿՈՒՄ. — Այս գործողութիւնով, կտա-
ւատի թելերը կը զատեն, որ կը կատարուի
փայտէ շինուած մասնաւոր դանակով մը:
Նախապէս արտադրութեան կը կոչուի խծուծ
(խսթիւփի): Եւրոպայի մէջ այս գործողու-
թիւնն ալ դիւրացուցած են կարգ մը նորա-
հնար վեքենաներով: Բայց որովհետեւ մեծք հոս
աւելի ներկարարութեան վրայ խօսելու նպա-
տակ ունինք քան թէ վաւեր պատկերացու-
թեան, այսչափ հակիրճ տեղեկութիւններով
կը բաւականանանք առայժմ, եւ օր մը երբ
փափաքողներ գտնուին՝ մանրամասն ծանո-
թութիւններ կուտանք այդ մեքենաներուն
վրայ, որոնք գիւրութեամբ կ'ընտն շինուիլ
նոյն իսկ մեր գաւառներուն մէջ:

Թակելէն վերջը խծուծը կը սանարեն մե-
քենայով կամ ձեռքի գործիքով:

ՎՈՒՇ. — Կտաւի թելերը զոր վուշ կ'ուն-
ուանեն՝ երկայն, բարակ, կակուղ եւ փայ-
լուն կ'ըլլան. ոմանց գոյնը դեղնորակ. իսկ
տրիշներուն բաց կանաչ կ'ըլլայ. այս վեր-
ջիններուն կը պատկանին ընդհանրապէս ուռ-
տական վուշերը:

**ՎՈՒՇԻ ՅԻՋԻՔԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԱԾՔԸ ԵՒ
ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.** — Մանրադիտակով զնն-
նուած ատեն, վուշի թելը երկայն եւ ուղղա-
ձիգ խողովակի մը տեսքն ունի, իր երկայ-
նութեան վրայ, տեղ տեղ ծունցերու (պօ-
ղում) բաժնուած: Իր ֆիզիքական գլխաւոր
յատկութիւններն են, ձիւնակերպ սպիտա-
կութիւն, մետաքսային փայլ եւ դիմացկու-
նութիւն:

Վուշը բաց օդին չորցնելէն վերջը, իր մէջ կը պարունակէ միշտ, բամպակին նման վերի վերայ 3 առ հարիւր խոնավութիւն: Տաքութիւնը բամպակէն աւելի լաւ կը հաղորդէ, և հետեւաբար աւելի սառ կ'երեւայ: Իր այս յատկութիւնով, կոմաւեայ հանդերձեղէններէն աւելի յարմարութիւն կ'ունենայ տմրան եղանակին:

ԲԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆ.— Երբ ծածմբան թթուութի (քաճ կաղը) և մանիշան լուծուածքի ազդեցութեան ենթարկենք, թեւերու արտաքին երեսը կտայցս գոյն մը կ'առնայ, մինչդեռ խողովակին մէջը գլուխուած նիւթը կը դեղնի: Ասիկէ կը հետեւի որ, կտաւի թեւերը, այսինքն վուշը, խկալէս խորանիւթէ կազմուած է. բայց խակ միջնակին մէջ, այսինքն ճիւղիկներու գործողութիւնէն առաջ, իր մէջ կը պարունակէ 100ին 15—30 օտար նիւթեր:

ՎՈՒՇԻ ՎՐԱՅ ԱՅԼ ՆԻ ԱՅԼ ԱՂԱԿՆԵՐՈՒ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ.— Ինչպէս տեսնուի, կտաւի թեւը, իր անարատութեան մէջ գլուխ խորանիւթէ կազմուած է. հետեւաբար քիմիական ազդաները ինչ կերպով որ կը ներգործեն բամպակի թեւերու վրայ՝ նոյնն է նաեւ վուշին համար: Բայց առհասարակ վուշը աւելի դիւրութեամբ կը բաղաւաճուի, և մասնաւորապէս կիլոպական ալքալիներու (սուս՝ բոքսիտ բոքսիթ), ջրացած՝ ուժով կիրի, ինչպէս և քլորի և ենթաքլորուկներու ազդեցութեան տակ: Կտաւի թեւը՝ բամպակի թեւէն աւելի դժուարութեամբ կը ներկուի: Ասոր պատճառը՝ թեւերու ընկճներուն ջրջապատի հաստութիւնը, քիլոպական կազմուածքը, և այդ կարելուածքին մէջ գտնուած դոնդուլային (pectiques) նիւթերու ներկայութիւնը բնաւ կը կարծուի:

(Ետք.)

2. FOLUS

(*) Վեր. Հ. Մ. Բաթունի acide բառին իբր հայերէն համանիշ կը գործածէ «թթուութի» բառը, թթու հասարակ անունէն որոշելու համար, ինչ որ յարմար դատուելով, մենք ևս կը հետեւինք այս մտաւին իրեն:

Ծ. Խ.

ԹՈՒՐԲ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԳՈՀԱՐՆԵՐ

ՖԻՅՆԷԹ ՀԱՆԸՍ

ՆՇԱՆԱԿՈՐ ԳՐԱԳԻՏՈՒՇԻՆ

Աւելի քան մէկ դար առաջ թուրք բանաստեղծութիւնը իր «աշուղներու» շարքին մէջ առնեցած է նաեւ նշանաւոր ներկայացուցիչ մը իր անունը սեռէն: Իր քերթուածներու հաւաքածուն (տիւմն) ապրած ժամանակին թուրք լեզուին բազմաամօր յիշատակութեան արժանի է. այդ բանաստեղծուհին Ֆիթնէթ անունով կը յարժարժուի՝ որուն բանաստեղծական գրութեան շարքին մէջ կը հանդիպենք աշխարհի տաղերու՝ որոնք գոյցն իր պատկանած սեռին մեղկութեամբ անպաճուն զգացումներն չեն, այլ հակառակին հարուածեալ սրտի մը թափերն. և այդ թուրքերէն է որ իր հոգին կ'արտայայտի:

Գծուած անձերու նկատմամբ իր մէկ երկտալն մասնաւորապէս ու ոճին վրայ ամփոփ գազազափար մը կրնայ տալ. «Իտուալ սարփ քալիւրուլըն ումնա լուքի Էրասուր խըսէթուլնէնէ՛ տէնլիւ ապ վէրսէն նախի խիւշքէ մայվէտար օրնալ» = Թարգմ. «Երեսիդ ջուրը թուրքերով, այսինքն ամօթխածութիւնդ՝ ցոյց տալով շնորհ մի՛ յուսար անոնցմէ որոնք գլուխուած են, զի չոր արմաւենին ինչ կերպով ալ ստուգես պտուղ չարտադրեր», ու ամօթիւ մ'ալ ուղղադարձներու հանդէպ բաղդին կոյր լինելուն վրայ իր թախմանքն դուրս կուտայ. «Սիրիհըր քէհադատուն բաթքեարան պէհրէտար օրնալ. Կիւլիսթանի ճիհանըն սէրվի ազաուրնուս» (*) պար օրնալ. «Կայր բազդին

(*) Նոճին «ազաու» կոչուելուն վրայ գրուած է թէ որ մը տարիաւորն Մէհնուն, «Լէյլա»ի սէրէն վառուած, երբ թախառական կը շրջէր, կը տեսնէ որ պարտիզպան մը տապալը ձեռքը բալճրահասակ նոճի մը կը տրեւ կ'ուզէ: Այս նոճին իր հասակագէղ «Լէյլա»ին նմանցնելով, Մէհնուն կ'աղաչէ պարտիզպանին և գոյն գնելով կարգեւէ զէրծ կը պահէ, որուն համար այն նոճին ապառ խոճի կը կոչուի, ու ժամանակ անցնելէ վերջ յաճախ գործածութեամբ նոճիներուն անուն ե-

չնորհներուն ուղղադարձները մասնակիչ չեն ըլլար, աշխարհի վարդենեաց ազատ նոճին պտուղ չունենար» :

Ֆիթնէթի «Իզզէթը նէֆս» (*) վերնագրով քերթուածն ալ կ'արժէ կարդալ՝ զոր կը դընենք աստանօր՝ թարգմանութեանը հետ :

«Թէզէլիւլ իլէ տէօքմէ ապիրույըն իզզէթ իսթէրսէն», — Միտարի կիւհէրը չէ՛վար՝ գատր ու գըյմէթ իսթէրսէն — Սագըն թէլի իթմէ վա՛ղը պինէմէկլէ քիմնէնին ալըն — Նէվալի սիւֆտէի ճիհանտան լէզզէթ իսթէրսէն — Ճիհանէ նէչէյի չէվգ ու սաֆա պախլ էյլէ Փէյլիսէլ — Մէյի պէրրագ վէ՛լ՝ պու պէզմ — կէհտէ տաֆվէթ իսթէրսէն — Ճէֆայի զամմի չարխա՝ սինէ կէ՛ր Փըսսը նիկիյն ասա — Միւրատ իւզրէ նամուշան վէ չէօհրէթ իսթէրսէն — Օլւար էնճամքարը տէրտը միհնէթ իսթէրսէն, Ֆիթնէթ. — Մէյի մանայի բէնկին իլէ մէսթ օ՛լ իշրէթ իսթէրսէն .»

Թարգմ. «Եթէ փառք ու նման արքայաժայել գոհարի յարգ ու սրտիւ կ'ուզես, երեսիդ ջուրը մի՛ թափեր նաաստանալով, — Անհամ, անհաճոյ վարմունքով մէկու մը կենցաղը մի՛ դառնացներ, եթէ այս աշխորհին խրախճանքէն համ ու հաճոյք կ'ուզես զգալ, — Աշխարհիս մարդկանց քեզ բաղձալու ու քեզմով զուարթանալու աւելնը տո՛ւր (բառական թարգմանութեամբ, աշխարհայիններուն՝ զարգացումովդ խանդի ու բերկրանքի զուարթութիւնը տո՛ւր) — Եթէ այս աշխարհէն՝ որ խրախճանութեան վայր մ'է, — Վճիտ գինիի նման անկեղծութիւն (զտութիւն) կ'ուզես : — Մատանիի քարին օղակին պէս՝ ճակատագրին քեզի տուած հարուածներուն կուրծք տո՛ւր, — Եթէ այս կեանքին մէջ ա-

ղած է : Կիւլիսթանի քերթողն, Սատի, այլուր ըսած է թէ «Պէ սէրվ կիւֆիթ չէքի՝ մէյվէի նէմի արի, ճէվապտար քի ազատէկեան թէհի տէսթ էնտ» . թարգմ. մէկը նոճին կ'ըսէ . «Պտուղ չես տար, — սրտատխան կուտայ թէ՛ ազատականք դատարկածեան են (անկուտի վարժապետներուն աղանջը խօսի) : Սոյն տողերէն կը հասկնանք որ «սէրվ»-ին «սէրվի ազատ» կոչուելուն Աստուծաւ եղած են արեւելեան այն սիրովէպին հերոսներն՝ Լէյլի և Մէճնուն :

(*) Իզզէթը նէֆս = անձնասիրութիւն :

նուն ու համբաւ չահելու խճը ունիս, — Ո՛վ Ֆիթնէթ, — Վշտահարին տառապանքն սլ իր վախճանը ունի, — Եթէ արքենալ կ'ուզես, փայլուն խմատից նեկտարով զինովցի՛ր :

Սոյն թարգմանութեան կարելի եղածին չափ բառական ճշգրտութեանը հոգ տանելով հանդերձ՝ կը զգանք որ իր բնագրին քերթողական պերճութիւնը չունի, և բնական է որ չունենար, քանի որ ամէն լեզու իր առանձնայատկութիւնն ունի : Էպուզգիա թէվֆիգ պէյի աններող քննադատութեան և հետեարար ժամանակիս գրականութեան ոգիէն դատելով Ֆիթնէթի սոյն քերթուածը պիտի դատախազուի ու իր արեւելեան հրապոյրէն պիտի մերկանայ, սակայն աւելի քան 110 տարի առաջ ապրող Ֆիթնէթ մը ի՞նչ գիտէր որ մէկ դար վերջը արդի նուրբ քննադատութիւնը՝ Ֆուլվիայի ոսկի ասեղով պիտի ծակծկէր իր լեզուն ու սիրտն : Բայց եթէ ամէն գրուած իր ժամանակի գրական ոգիով դատենք՝ զՖիթնէթ պիտի գտնենք պանծալի աղջիկը Երթողուլի աղնիւ գարմին : Ֆիթնէթէ առաջ և վերջը թուրք բանաստեղծութիւնը թէ և ունեցած է իդական սեռէն ուրիշ ներկայացուցիչներ, բայց «Մէսանի-իւլ-ինշան»՝ որ 1289 (Հ. թ.)-ին հրատարակուած երկհատոր առաջին գիրքն է թուրք լեզուի գրագիտական ու ճարտասանական կանոններուն, իբրեւ օրինակ ունեցած բազմաթիւ արձակ և չափեղ կտորներուն մէջ՝ գեղեցիկ սեռէն միայն Ֆիթնէթի քերթուածներէն քանի մը կտոր ունի : Արդի թուրք գրականութիւնն ալ ունեցած է Ֆիթնէթ հանրմի արժանաւոր յաջորդներն, որոց առաջիններէն համարուած են Ֆաթիմէ Ալիյեհէ, Նիկետար, Լէյլա Ֆէրիտէ հանըմներն : Ֆաթիմէ Ալիյեհէ հանըմ այժմու թուրք գրականութեան Söviğneden, վախճանեալ Ճէվտէթ փաշայի դուստրն է :

Ասկէ ոչ շատ առաջ Մալիւմաթ օրաթերթին էջերն Բալմախնութիւն سادات (Թէստոսիւտը զէվճաթ) վերնագրին տակ Մահ-

(*) Ինչ որ ասացայց մ'է թէ իր գրուածներն քերթողական հայեցակէտով իր ժամանակակից թրքահայերուն գրական արտագրութիւններէն աւելի արժէք մը ունեցած են, եթէ ուրիշ պատճառներ ալ չկան :

մուտ էր աստ էֆ.ի գրչէն ելած յօդուածներ
կը պարունակէին. սոյն յօդուածներուն մէջ
Յաթիմէ Ալիյէէ հանրմ. քննադատելի ինչ ինչ
իշտեր նշմարելով՝ յիշեալին երեք մաս յօդ-
ուած կ'ոճողէ նոյն թերթին միջոցաւ. աւե-
լորդ է ըսել թէ՛ խնդիրը ինքնին բաւական
հմտութիւն կ'ուզէ խաւանական բարձր գի-
տելեաց ու Արար լեզուի: Բայ աստի՛ արե-
ւելեան կենցաղաւարտութեան վրայ երբեմն
հրապարակ նետած ներհուն գրուածներն՝
արդէն համարաւ մը շինած էին իրեն: Վերո-
յիշեալ յօդուածին նախարանը կը յաւելունք
իր ոճին վրայ թուրք լեզուի հետեւողներու
նշանի մը տուած ըլլալու համար:

«Բաւթաւը ֆէզալիմէնտիմ էֆէնտիմ հազ-
րէթիքի».

«Զաթը Ֆազիլանէլէրի իզմիրտէ իքէն,
պիր քէլէմմալէլէրինէ նախ օլմուշ իսիմ քի
պունասա՝ եւքտիլէրիմիզէ եապանճը օլմա-
յուպ պիր իւթաւտտան թէպլլումաւ թէպէտ-
րիւս էլէմիլ պիր իւթաւտ շալիրտլէրի պու-
լունասուցումը պէտան պուսուրուլըտորտը:
Պու նիմէթին շաքիրի օլմալլա պէրապէր,
«Աւգրաթըն» (*) հէր շալիրտի «Ֆէլալուն»
օլմայաճաղընը տաթի համա օլուն թէֆէ-
հիւմ իտէպիլիլիմ ճիհէթլէ, պիր հալգայի
թէպրիստէն ելթիլէնէլլալէն իւթաւտ չըգան
իլէ՝ հէր կիւն թալիպ ու շալիրտ գալանլար-
տա պուլունտուղընտան, աճիլէլէրի ելինէ վա-
թը Ֆազիլանէլէրինի պիր իւթաւտ կէօրմէք-
լէ վէ քէնտի աճըրմը թանըմալլա միւթթէ-
խիր պուլունտուրմ, պու հալսէ շու սաթըր-
լարընը՝ պիր թէլմիլին՝ իւթաւտտան իք-
մալը մալիւմաթ մագաւտըլա օլան իսթի-
զահաթը մագաւմընտա թէլազգընընը ըէճա
իտէրիմ» ելն:

Ինչպէս կը տեսնուի, իր գրական լեզուն
դասական ըլլալու աստիճան յոռնի ու կոկիկ
է, յեթի՛ մնալէտ իսթիմաւանութիւններէ ու
անխմբոտ ասացուածներէ՝ որոնք տակաւին
կը վիտան նոր դրաղէտ կոչուածներու գըր-
ուածներուն մէջ իսկ: Ուրիշ առթիւ «էթ-
ուու» ներու քերթողուհին ու Ֆէրիտէի վրայ
պիտի գրենք իրենց ընտիր կտորներուն թուր-
գմանութիւնը ընելով:


Դպրեվանք

Ս. ԹԱՊԱԳԻԱՆ

(*) Սուգրաթ կամ Սուգրաթ (Սուրապետ)
որուն բառական նշանակութիւնն է «քմածոյ
մածուն»:

ՇԵՐԱՍԱԲՈՒԾՈՒԹԻՒՆԸ

ԲԱՍԿԵՐՈՒՄԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ



Մակարուծային

փոխանցիկ հիւանդութիւններ



ՓՏԱԽՏ (Flacherie, Պայկըն կամ Սիմիկ
հաթալըղը)

Երկար տոներն էր այնպէս կարծեցին թէ,
Պլպեղախաւը և Փտախաւը միեւնոյն հիւան-
դութիւնը կը կազմեն, և սիրող համաճա-
րակին միակ պատճառը: Եւ մինչև իսկ կարգ-
մը պատահական հիւանդութիւններ ալ ա-
նոնց կը վերագրէին իրրեւ հետեւանք: Մա-
նաւորապէս, Մ. տը Բաթըրֆաթ, Մ. Ժան-
Ժան և ամենէն նշանաւոր շերտաբոյժներ,
փտախաւը կը նկատէին իր պղպղախտի հե-
տեւանք. մինչև իսկ Մ. Բասդէօն համակար-
ծիք կը գտնուէր անոնց: Բայց երբ 1867ին
իր առաջին փորձերն ըրաւ, այս դիտնական
հետախոյժը նկատեց որ, մարմնիկներէ չի
վարակում հոնտերէ յառաջ եկած՝ նոյն-
պէս առանց մարմնիկի թիթեռնիկներ՝ որոնք
հետեւաբար պղպղախտէ կատարելապէս զերծ
էին, փտախտէ վարակուած են՝ մանրադի-
տակի գննութեանց ենթարկելով, մարմնիկի
հետք մը անգամ գտած չէ անոնց մէջ, բայց
նեխիչ թրթռակներ կը վիտային:

Փտախտի այս թրթռակները առաջին ան-
գամ, 1858ին, Թուրքիի Համալսարանի ու-
սուցիչներէն Մ. Ժօլի գտած էր. և 1861ին
Մ. տը Բլակինեօլ ևս անոնց գոյութիւնը հաս-
տատելով, կը կարծէր թէ՛ թմրախտի մարմ-
նիկները ասոնցմէ յառաջ կուգան ճուաճու-
թեամբ:

Երբ Մ. Բասդէօն այս երկու հիւանդու-
թիւններուն տարբերութիւնը, և իրարմէ
անկախ ըլլալնին հաստատեց, և երբ թըմ-
րախտի բնութիւնը սահմանեց, այն ատեն
ուշագրութեամբ վրադեցաւ փտախտի բնու-
թիւնը և պատճառները ուսումնասիրել:

ՓՏԱԽՏԻ ԱՆՏԱՆԻՇԵՐԸ. — Այս հիւան-
դութիւնը որ ֆրանսացիներէն կոչուած է
նաեւ թոյլ-մահ, սպիտակ-մահ, աղեաց հի-
ւանդութիւն կամ աղեփուտ, և Թուրքիոյ

մէջ տեղ տեղ, Պայկըն կամ Սիւմաք, իր գլխաւոր անոտանիշերն են. թրթուրներու նուազուն վիճակը, ողունք՝ հազիւ թէ կրնան չարժիլ, ակորժակին կը կորսնցնեն և այլևս չեն ճաշեր: Անոնք որ ցափեմքը ելլել կը փորձեն, ճիւղերուն ոտորոտը կը մնան, ուր շատ անգամներ հաւաքուած, վարանոտ վիճակի մը մէջ կը գտնուին և երբեմն ալ իբր թէ քնածցած կամ նոսրացած: Եթէ կրցած են մինչև ցափերը բարձրանալ, ճիւղերուն վրայ ժամերով երկնցած կը մնան, առանց իսկ շարժում մ'ընելու: Ամենէն տկարները կը մնան իրենց անկողինի վրայ, բոլորովին անշարժ վիճակի մէջ իրենց դպելով միայն կը հասկցուի թէ մեռած են: Այդ միջոցին կը կախուղնան և երբեմն արտակարգ շուտութեամբ կ'սկսին ներսիլ սև գոյն մը ստանալով. և ասիկա 24—48 ժամուան մէջ: Այլ ևս իրենց մարմինը կ'ստով չափ հեղկացած, սևագոյն, շարաւախ (թարախոտ) գանգուած մը դարձած է: Ասկէ առնելով ոմանք այս հիւանդութիւնը կը կոչեն «թարխոտ» կամ «թարխոտ»:

Հիւանդութիւնը երեան կ'ելլէ ընդհանրապէս չորրորդ քունէն վերջը. և այդ միջոցին է որ, իր ամենէն ահաւոր կոտորածները կ'ընէ. անկողիններուն վրայ ապրածուած կը մնան թրթուրները մեռած կամ մեռնելու վիճակին մէջ. մեռնելէ առաջ իրենց գիրքը ու է փափսխութիւն չի կրեր, և մորթերուն վրայ ալ որոշ սպիներ չեն տեսնուիր. միայն գլուխնուն մօտ գտնուած թաթիլիներուն անութի բոլորակը վարդագոյն նշաններ կը տեսնուին: Վերջապէս հիւանդութեան ամենէն յատկորոշ նշանն է, այդ միջոցին թրթուրներու մարմինէն արտացնած դարչաբոյր և թթուաչ հոտը, որ իսկոյն կը ճանչցուի: Մինչև իսկ մեռած թրթուրները բուծարաններու վրայէն, խնամով վերցնելէն ետքը, վարակուած հարկերի չափ թրթուրներ կը բաւեն իրենց դարչաբոյր հոտով, հիւանդութեան գոյութիւնը հաստատելու:

Փոսխոտի գոյութիւնը ոտագելու ընտրելագոյն միջոցներէն մէկն ալ, չորրորդ քունէն վերջը ցափերը ելլելու դանդաղութեան վրայ կը կայանայ: Բոլոր շերամարոյցները լաւ կը ճանչնան առողջ թրթուրներու ցափերը ելլելու փութկոտութիւնը. ուստի երբ կը տես-

նուին թրթուրներ՝ որոնք, ինչպէս վերը քննելը, ցափերու ոտորոտը հաւաքուած կը մնան, կամ ճիւղերու վրայ կախուած կամ տաքածուած կը մնան, ալ ևս կ'սկսած չի մնար: Բայց երբեմն կը նպատակի որ, թեթեւեղութեամբ վարակուած կըլլան, և այն ալ շուտ ուշ, յաջողութեամբ իրենց խոզակը կ'ոտայնեն, և մինչև իսկ լաւ բերք մը կ'ուտան: Բայց այդ խոզակներէն ելած թիթեռնիկները, ոչտք չէ՝ երբեք արտադրութեան սահմանել. սրովհետեւ յառաջիկայ տարին, իրենց հաւկիթներէն ելած թրթուրները փոսխոտի սերմերը պարունակելով իրենց հետ թեան մէջ, ամբողջ բերքը կ'ոչնչանայ:

Ահաւասիկ ասոր համար, Մ. Բանդէժո խորհուրդ կ'ուտայ շերամաբնջիներուն, որ երբեմն չի գործածեն այնպիսի հոններ, որոնք արտադրուած են այնպիսի թիթեռնիկներէ որ, ցափերը ելած միջոցին լաւ հրկողութեան ենթարկուած չեն: Ըսել կ'ուզէ թէ հետաքրքիր մը պէտք է ուղարկութեամբ հսկէ թրթուրներու վիճակը, մանաւանդ չորրորդ խորխոցումէն վերջ՝ մինչև խոզակաչինութեան ժամանակ: Իսկ եթէ կարելի չլլայ թրթուրներու վրայ հսկել, այն ատեն պէտք է անպատճառ խոզակներու մէջի կրծիները մանրադիտակի ցննութեանց ենթարկել:

ՓՏՈՒՄՏԻ

ՄԱՆՐԱԳԻՏՈՒՄՈՒՄՈՒԹԻՒՆԸ

Երբ մանրադիտակով փոսխոտ վարակուած թրթուրները գննենք՝ որոնք ալ ևս չեն ճաշեր, մեռած կամ մեռնելու վիճակի մէջ կը գտնուին, իրենց ալիքներուն մէջ կը տեսնուին հետեւեալները.

Ա. — Թրթուրներ (Vibron) : — Ընդհանրապէս խիստ շտապող երեւոյթով, սրունք կը շարժին արագօրէն՝ մանրադիտակի դիտաւայրին (Champ de microscope) մէջ, և ծայրընդ ծայրի կցուած 2, 3, 4 և աւելի՝ փոքրիկ ցլիկներէ բաղկացած ըլլալ կ'երեւին: Մեծ մասամբ մէջերնին կարիւղ չունին, բայց ոմանք անջատ և երկայն հաւկիթակերպ այտուցի ձևով կ'երեւին, մէջերնին ալ փայլուն կորիզով մը: Երբ այդ փոքրիկ այտուցները լուծման վիճակի մէջ գտնուին, փայլուն կորիզը ազատ մնալով, այն ատեն քիչ շատ

պղպեղափաթ մարմնիկին կը նմանի, որ դե-
ռավարդ մանրադէտ մը կը շփոթէ մէկմէ-
կու հետ :

Բ. Մէնիստ (Monade) մը, արագաստյոյ
չարժումներով, որ կըրածն փոքր մարմին
մ'է: Երբ 100 կամ 1200 անգամ մեծցնող
մանրադիտակով մը քննենք, որուն իրացոյցը
(objectif) ընկղմիչ (à immersion) անակէն չը-
լայ, պիտի տեսնուի որ, այդ մէնիստը իր հա-
մաստեղներուն պէս 1, 2 կամ 3 թրթռացող
երկայն թարթիչներ ունի :

Գ. — Ծայրատ ցպիկ (bacterium termo) մը,
և կամ ուրիշ շատ փոքր թրթռակ մը, ճիշդ
իրեն նման կենդանի հատիկ (granule), մի-
աձև՝ առանց թրթռացող յօրինումի :

Դ. — Խմորիտ (ferment) մը, 2, 5 կամ
6 դնտաձև հատերով դիւրաթեք համրիչա-
չար գնդիկներէ բաղկացած, որ կը նմանի
գարեջուրի խմորին, բայց աւելի փոքր է և
կամ քաղցախային դեռածին մաշկաառնիկի
(mycoderma acetii) :



Պատկ. 43. — Փտտիտի թրթռակները և խմորիտները

Ա. Թրթռակներ (կենդանութիւններ կը նշանա-
կեն՝ մանրադիտակի դիտողայրէ մէջ երեւց ըն-
թացքի ուղղութիւնը) : — Բ. Փայլուն կորեզով
թրթռակներ : — Գ. Համրիչաչար խմորիտներ :

Վերայիշեալ տարրերէն և ոչ մին գոյու-
թիւն ունի առողջ թրթռուներու մարմնոյն
մէջ : Սակայն չի գործնանք ըսելու թէ, թրթ-
ռակները, ցպիկները, և մէնիստները, փո-
տախտի հիւանդութեան յատկորոշ տարրեր

լեն : Ասոնք ծնունդ կ'տանեն ցամէն տերակ
ներսոյ նիւթերու մէջ : Մինչդեռ համրիչա-
չար խմորիտը՝ ընդհակառակն, փափափո հի-
ւանդութեան խոնիրսի յատկորոշ տարրը կը
կազմէ :

(Շար.)

Ղ. ԲՈՒՆՏ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆՈՔԵՐ

ԾԻԱԽՈՍԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Բարեկեաններէ վին անցեալները կը տար-
տեջալը իր պոռոջական վիճակէն, և կը հա-
ռաչէր թէ ձեռքի ջնապները կը դողդուրային
պեղալով ծեցունի մը չորացած գոնաթմով
ձեռքերուն նման, ու պակաս առ պղծաւ և-
րենին կարմրուկները իսկս կուտային, այն-
պէս որ հետցհետէ տեղայն ու լոնայն կեր-
պարանք մը կ'առնէր, քո ըստ օրէ ախորժա-
կի պակասութիւն և քիչ մալ յիշատակման
ստիւն կու գային ողջունել իր խեղճակ ըս-
տամբսը : Եւ Բնջութս կրնայի զգտակար
Ըլլալ բարեկեանիս, որուն վրայ կ'արգահաւելի
չիտակը, իր միակ դժգոյն բժիշկը ցոյց առա-
լէ և կարճ խօսքով պնդը դուրս առնելէ
ուրիշ ճար ճկալ ըսելէ զառաջ Այս պակասն այս
մոլերակալան հագածութիւնը բալեկամիս յայ-
տնելէ առաջ, փոթացի ձխակտոյնն հրա-
ժարական մատուցանելու հարկը պատուիրել
ու ծիւղէ դադարման փորձն արաճալորել,
լնչ որ բարեկեանիս դժգոյնութեան պատճառ
եղաւ : Այսու հանդերձ կը հաւատամ թէ
դժուարին ըլլայ իսպառ հագածարիս և հեռա-
նալ այնպիսի սովորութենէ մը առաջ գլխի մե-
մէն ազդի և դադակարդէ մէջ փոթութիւն
դարձած է, և եթէ քիչ մ'ալ զարաճ կրնու-
լու համարձակութիւնն ունենալ, համաճարակ
ախտ մը պիտի փորձուի ըսելու եւ զարմա-
նալին այն է որ ամէն ոք — չափ քիչ թիւով
բացառութիւններ — դրեթէ պատպնեկան հա-
սակէ սկսեալ խոնոյն ծիւղել սոփորութեան
յարեղու և փարեղու ձգտում մը և փութկո-
տութիւն մը կ'արտայայտէ ի խոր սրտէ :

որուն ի տես մարդ այնպէս կը կարծէ թէ մայրենի ստիւնքը այնքան քաղցր ու ախորժակամ չի թուիր որքան ծխախոտի դիւթիչ ու հմայիչ ծուխն ու մուխը։ Այնչապէս ապրա-գայի մէջ եթէ չէք կրնար լքել ծխախոտը, դոնէ կարելի եղածին չափ քիչ ծխել ջանա-ցէք։ Մանրամասնութեանց մոտեցէ առաջ կը փութամ նաեւ ըսել թէ բարեկամիս վրայ կա-տարուած փորձը ոչ նուազ արդիւնք առաջ բերաւ, որմէ թելադրուած՝ ներկայ տողերս գրել ստիպուեցայ, այն նկատումով ան-չուշտ որ թեքեց հանրութեան մէջ ալ գըտ-նուն բարեկամիս նմաններ— որու մասին ա-նեկրայ եմ— և օգտուին։

Ծխախոտը միամեայ խոտային տունկ մըն է որ ի սկզբան 1518/ին Հարաւային-Ամերի-կայէ ծագում առած և առաջին անգամ ըլ-լալով Սպանիացիներէ գտնուած է Մեքսի-կայի եզերաց վրայ թափաքօ քաղաքին մէջ, որուն հմար՝ Ենթալայիք այժմ տունկը իր գտնութեամբ քաղաքին անունով մկրտած են։ 1560/ին Փորթուգալի ֆրանսական դեսպան Ժան Նիգոթի միջոցաւ, ծխածխոտը այլուր փո-խադրուած և շատ տեղեր ներածուած է, և մինչև իսկ Գալիէի մը Մէտիլիս թագուհ-ւոյն ներկայացուցուած է. այդ առնէն ծխախոտին դեսպանական խոտ, նուիրական խոտ, թնդուհոյ խոտ անունները տրուած են։ Թէպէտ Լուի ԺԳ. արտօնած է ծխախո-տի վաճառումը անկէն դեղափաճառներու քով, սակայն յետոյ Ժագ Ա. ընդհանրապէս՝ գար-չոհոտ ու զաղորդի խոտ տնտեսած և վա-ճառումը արգիլած է իսկ Էլիզապէթ կայս-րուհին քննարկին արգիլած է անոր մշակու-թիւնը և այսօրեւ իսկ ալ չը շատանալով, իսկո-նիկացիներու դիմած, դրամական տուգանք-ներ որոշած և սպառիկ նեղութիւններ ու տանջանքներ տահմանած է ըմբոստ ծխողնե-րու համար։ Իււպէն ԺԳ. Պապը աւելի ա-ռաջ երթալով, եկեղեցիներու մէջ հրապա-րակաւ բանադրած և նշուած է թէ՝ ծխող-ները եւ թէ՝ ծախողները։ Ամուռա Գ. աւելի ծանր պատիժ մը անօրինած է, այսինքն՝ դործածողներուն քիթը կտրել տուած է։ Էնթի ԺԳ. աւելի փնտրամանկ և գործունեայ անձ, ծխախոտի գործածութենէն իր երկրին համար չափ մը փորձառութեամբ երեւակայելով, անոր վաճառումը վարձու տալ խոստացած է

անոր՝ որ տեղւոյն երևտական գանձին 500 հազար ֆրանք հատուցանէ, իբր երկու տար-ուան վարձք։ Ահա Մենապոլիսութեան (Monopole) սկզբնաւորութիւնը եղած է այս, որ Լուի ԺԳ. ի ժամանակէն ծնունդ առած է։

Ծխախոտի տեսակները շատ են և գրե-թէ յիսուհ տեսակներ կը համարին, բայց ա-տոնցմէ միայն երկուքը կը մշակուին, որոնցմէ միոյն «Նիքոտիմա ուրթիքա» (դիւզական ծխախոտ) և միւսը «Նիքոտիմա թափա-քուօ» (թափաքօ ծխախոտ) կ'ըսուին։ Առաջին տեսակը՝ որուն ցողունի բարձրութիւնը 60էն 90 հարիւրորդամէթը կը հաշուուի, ճուռն և բաւական, կոթաւոր 35—30 հարիւրորդա-մէթը երկայն, մութ կանաչ գոյնով տերե-ներ ունի. ծաղիկները կանաչորակ դեղին են, ամրողջ տունկը ծածկուած է մածուցիկ և զարահոտ մազերով. այս տեսակը ընդհան-րապէս կը մշակուի Ֆրանսայի հարաւային կողմերը ու Սփիյ, Ալիւրիէի և Հր. Ամերի-կայի մէջ։ Երկրորդ տեսակը՝ որուն ցողունի բարձրութիւնը մինչև 1—2 մէթրի կը հասնի, երկայնաձիգ, նիւակաձև, կակուղ, բայց կե-նաչ գոյնով տերեւներ ունի, ծաղիկները մեծ-կակ և վարդագոյն են, տունկին բոլոր մա-սերը ծածկուած են մածուցիկ շատ կարճ մազերով և կ'արտաբերեն ծանր և զաղորդ հոտ մը. այս տեսակը ընդհանրապէս կը մը-շակուի Ալժերիայ, Պելժիքայի, Հոլանտայի, Հավանայի և Բուսայի մէջ։

Ծխախոտի բաղադրութեան գալով, ծխա-խոտը իր մէջ կը պարունակէ շատ մը տար-րեր, որոնցմէ ամենէն կարեւորը ծխախոտիան է (նիքոթին) որ ցնդողական ալքալոիդով է (Alcaloïde volatil), անկից զատ կայ նաեւ յօրինուածային թթուներ (ասին օրկանիք), զոր օրինակ, խնձորական թթու (ստիտ մա-լիք), լեմոնական թթու (ստիտ սիթրիք), քա-ցախական թթու (ստիտ ասէթիք), թրթնջ-կային թթու (ստիտ օքսալիք), նաեւ յօրին-ուածաւոր չեղոք մարմիններ (զօռ նէօթ և օսկանիք). օրինակի համար, ռետին, ինժ, (լոս), բուսական բնասպիտ (պոլիմեր) վէ-ժէթալ, սոսեղիտ (կլիթէն), նալի (սոլի-տոն), նաեւ հալքային նիւթեր, օրինակի ա-ղազաւ, կալի (քօթաք), կիր, մանեզիւ, եր-կոթ, անուշադր (ամոնիաք), նաեւ հանքային թթուներ, օրինակի համար, անկեղեղանային

թիւ (ասիտ ազգութիւն), ջրաքլորային թիւ (ասիտ քլորիտիւն) և ծծմբային թիւ (ասիտ սիւլֆիւրիւն)։ Ասոնց մէջ ամենէն գլխաւորը, կարեւորը և ազդեցիկը ծխախոտին է, որ բարկ և թունային հոտ մը և կիզիչ համ մը ունի, որոնց կ'ընկերայայ նաև թունաւորիչ յատկութիւն մը, այն պատճառն որ 15—30 հարկարողակուած ծխախոտը կը բաւէ մահ յառաջ բերելու համար։ Ծխախոտիտը ինքնին իւղակերպ հեղուկ, թափանցիկ և անգոյն մարմին մըն է, որ օդին ազդեցութեան տակ կը գունաւորի, և ջուրի, ալքոլի և էթերի մէջ լուծանելի է։ Իր ազդեցութեան տակ կը բռնաբերէ խոտէն ներքին փնայնը։ Ծխախոտի գործածութեան եղանակը երեք տեսակ է. առաջինը՝ ծամել, երկրորդը՝ քիթը քաշել, երրորդը՝ ծխել։

Ծամելու սովորութիւնը Քերնի մէջ խիստ անխառն հոտ մը և համ մը աւթելու անպատեհութիւնն ունի. ասիկց զատ ծամողներու ակունքները կը բաժակին (իրենց լինութեան կը վատուին), կը դեղնադուրսին և կը մաշին, լինտրերը կը կարծրանան, ահա այսպէս բերնի բորբոքում մը առաջ կուգայ, որ երբեմն մինչև դէպի նշագեղձերը (ամիկտալ = պատէմէիք), քմատէսի մոյթերը (բէլիէ տիւ փուտ սիւ բալէ) և կոկորդը կը յառաջանայ, այս սովորութիւնը շատ զազրելի սովորութիւն մըն է, որ մեր մէջ գոյութիւն ունեցած չէ, այս պատճառաւ չենք ուզեր առաւել ծանրանալ։

Գործածութեան երկրորդ տեսակն է ծխախոտը քիթը քաշել, որուն աւելի պատշաճօրէն քթախոտ գործածել կ'ըսենք. քթախոտը ուրիշ բան չի կարծէք, էթէ ոչ ծխախոտի փոշին, զոր տեսակ տեսակ հոտաւէտ փոշիներով միախառնելով մեր տեսած վիճակին կը հասցնեն. քթախոտ քաշելու սովորութիւնը հինաւորաց մնացած և ծերունիներու մէջ ընդհանրացած սովորութիւն մըն է։ Երբ քթախոտը քիթէ ներս քաշուի, ռնգային մզանոտին վրայ կը պատճառէ հոտաւակիւն կրկին զգայութիւն մը, որ անդրադարձ գործողութեամբ փնայնութիւն և խլիքի առատօրէն արտադրութեան տեղի տուող լոկ կ'ծուծէ (բիթօքըման) մը կը բալկանայ. ռնգեքնու մէջ քթախոտի կատարել կ'արտադրէ երբեմնակի պարագաներու տակ

թմրութիւն, քնեթիւն (սոմնիւն), նաև աւելի ծանր փտանգներ։ Երբ քթախոտը քիչ քանակութեամբ գործածուի՝ կը դրդուէ ուղեղը չափաւոր կերպով, աւելի գպածօն և աւելի զօրուար վիճակի հասցնելով այն կարգը զանգեցնելը որոց կ'առաջնորդէ ազդը։ Մեծն Ֆրէտէրիքի և Նաբոլէոն Ա. ի քթախոտի սիրահարները ըլլալին կը պատմուի։

Գալով ծխելու, այս տեսակ գործածութեան վնասները շատ են, որոնք աւելորդ է ըսել թէ ծխողներու գրեթէ շատերուն վրայ կը տեսնուին։ Ծխախոտի չարաչար գործածութիւնը առաջ կը բերէ ակտիւ շնչառութեան, մարմնական ինքնաբերական, դժուարօրէն մարմնութիւն, անարիւնութիւն, սրտի բարձրաման տկարութիւն և անկանոնութիւն։ Կարծքի փողացում, ուղեղային գոյնութեան նուազում, յիշողութեան կորուստ, տեսողական չիֆթութիւն, ակնազոդի (քօնթօնքթիւ) չարընթաց բորբոքում, նաև բլէպակնութիւն, ատոնցմէ զատ, ծխողներու ակնակները կը սևանան, լինտրերը կը գրգռին, կոկորդը և ինչպիսիք կը բորբոքին, և մինչև իսկ ծխողներու իւրաքանչիւր ընտանիքի ծխեցնելու կը յանգի։

Ծխախոտին գլխաւոր ազդեցութիւնը որ իր մէջ գտնուած ծխախոտիտին կը վերաբերուի, ամենէն աւելի ազեաց վրայ է։ Ծխախոտիտը կը գրգռէ ազեաց սողնակեղալարածուրը (և կամ ընդերային շարժում = մուշ վրման բեռնաթաղիք), որով կը վտարէ պնդութիւնը. այս շարժումը քղնածուծին մէջ գտնուած ընդերաշարժ կեդրոնին գրգռումէն առաջ կուգայ։ Եթէ փողերակի մէջ (վէն ժիւկիւլէն) վերոնշանակեալ նախալարակներէն շատ քիչ քանակութեամբ ներարկուի՝ կը տեսնուի որ նախքին՝ ստամոքսէն մինչև ուղղընթեքը (սէքդօմ) մանաւանդ նրբաղին կ'ծկուած այնքան ուժգնութեամբ կը կատարուի որ իր մէջ գտնուած կապերը և կզկը զանքը մեծ արագութեամբ կը մղուին դէպի սրբան, ասոր ընդերային ակտիւստ (դէղանոս էնթէսթինալ) կ'ըսուի, որ ընդերակն ծխախոտի ներքին պատիկ գրգռումէն առաջ կուգայ։

Ինչպէս որ ծխախոտը իր բացարձակ վրնասներն ունի առողջութեան, ունի նաև իր օգտակարութիւններն ալ՝ երբ չափաւոր քանակութեամբ գործածուի. սակայն, ուղեղա-

յին զրգուռմ մը կ'արտադրէ, աշխատութիւնը կը դադարեցնէ և գործունէութիւնը կ'աւելցնէ, վաղիկենապէս մտքի յստակութիւն կուտայ, և հարծեն ծանձրոյթն ալ կը փարատէ աւ հոգերը և խահերը կը վանէ: Հետեւաբար ծխախոտի արգելք չենք դնել, միայն անար չսփռնոր կերտով գործածութիւնը կը պատուիրենք:

Սիկաթապէտը է միկառակալով (աղբզլըզ) ծխել քաղպէս զի բերնի մզանուտը ծխախոտի հետ քաղպակի հաղորդակցութեան և չփռան մէջ չի գտնուի, որով մզանուտը մկատուելէ պէտք վը մնայ: Եթէ ծխափող քաշել ուղուի, պէտք է երկար խաղովակաւորը ընտրել: Իսկ կլկակը (նսպկիլէ) որուն գործածութիւնը ընդհանրացած է մեր մէջ, կրնանք ըսել թէ ծխելու ամենէն բաւագոյն միջոցն է, որով հեռեւ ծխախոտը կամաց կամաց կ'այրի, և իր ծախքը ջուրէն անցնելով հոն կը թողու իր ծխախոտի տնի մեծ յատարա ալ ստկայն այս գործածութեան մէջ պէտք չէ շնչառական գործողութիւնը յոգնեցնելու չափ ուժգին ուժգին ներշնչել: Վասն զի կրնայ լըլը որ շնչառական գործարանաց հիւանդութիւն մը երեան գայ: Նաեւ չափէն աւելի տկուքաւոր (գիֆիլի) սիկառակալով և կամ ծխափողով պէտք չէ խմել: Վերջապէս ծխախոտը ինչ ձևով ալ խմուի, պէտք է միշտ խաւ չոր տեսակէն ընկայ: Պէտք է նաեւ ծանր ծանր ծխել, մուխը չը կլկել, յոճակ թքնել, կարեֆի Եղածին չմիկ միշտ բացօդեայ, ընդարձակ և օդաւէ մտեղեր ծխել:

Այն անձեքը, որոնք հարկային և բորբաքի հիւանդութեանց, բերնի և կոկորդի, խոցիկի, թուքի և պնի հիւանդութեանց, նաեւ քթաւարամարսութեան եղծակիոյ են, պէտք է բոլորովին դադարին ծխելէ: Ծխախոտը բժշկութեան մէջ հին ասեանները բաղտխեղձան և աղբալեղտութեան գէժ գործածութեան, նաեւ խոզի ճարպի հետ միախառնելով, գլխու և ուրիշ հիւանդ տեղերու մէջ ամբողջական ինքնակոչ հիւանդը ոչնչացնելու համար գործածեան: Եւ սակայն այսօր բոլորովին անգործածելի մնացած է:

ՄԱՏԱԹ

ԹԱՐՄ ԿԱՐԱԳԻ ԱՆՎԹԱՐ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

ՀԱՐՑՈՒՄ ԹԻՒ 67

Հանրագիտակի յարգոյ գործակալներէն մին հետեւեալ կերպով կը գրէ մեզ.

«Ձեր բաժանորդներէն մին զոր կ'աշխատի անդի կարագը (թուզուղ թէրէ եաղը) երկար ատեն անայլայլ պահելով, որ իր միակ սիրելի ուսելիքն է, բայց չի յաջողիր. ուստի՝ եթէ այս հարցումը հրատարակէք և գործնական միջոց մի ցոյց տաք, մեծ հաճոյք պատճառած պիտի ըլլար Ձեր ծերունի բաժանորդին, որ երախտապարտ պիտի մնայ Ձեզ, նորովհետեւ շատ նեղութիւն կը կրէ՝ ուղած ատեն այդ անտուական ուտելիքը գտնելուն:»

ՊԱՏԱԹԱՆ

Կարագը իր մէջ կը պարունակէ ի միջի այլոց, կաթի չիճուկ, որու բաղադրութեան մէջ կը գտնուի կաթնային չաքար: Երբ այս չաքարը լոյսի և օդի ազդեցութեան ենթարկուի, օդին մէջ գտնուած թթուածինին հետ միանալով, կաթնական թթուաւ (ապիտաթթիւ) կը փոխուի, որ կարագին հետը հետէ կ'ծնէ համ մը կրնայ:

Ասկէ զատ, կարագի բուն բաղադրութեան մէջ կը մտնան արդէն կարգ մը ցընդակոն խոլեսթիւններ, զոր օրինակ, կոլիտ (պլաթիլին)՝ մարկիւղիտ (մարկիւրին), ձէթիւղիտ (ճէլին) ևլն. ևլն. որոնք ծղի և լոյսի ներկայութեան, կը փոխուին թթուածներով: Այս յատկաւորութեան ատեն խմորում մը տեղի կ'ունենայ, որու կողմէն խմորում կ'ընեն, որով և կարագը իր նախկին յատկութիւնները կորսնցնելով, կ'այլայլի, կը բորբոքի, կը նեխի:

Գիտնալ պէտք ենք նաեւ որ, բոլոր այս խմորումները և գոյամիտութիւնները տեղի կ'ունենան մասնաւոր հեղձանքներով (էնֆիւզուար)՝ մանրէ՝ աղդեցութեամբ:

Արդ՝ որպէս զի կարագը երկու ատեն անվթար պահուի, պէտք է նախ «անարատ»

ըլլայ. այսինքն՝ իր մէջ չի պարունակէ մասնաւորապէս կաթնային շիճուկ. — Դ. Օգի և լայտի ազդեցութենէն զերծ մնայ. — Գ. Արդէն իր մէջ գտնուած մանրէները անէպցին, և արդիւնը որ նորեր չի մտնան անոր պահպանութեան մէջ:

Առաջին պայմանը կատարելու համար, այսօր հնարուած է այնպիսի մեքենաներ, որոց շնորհիւ կարագը անհաւատալի կերպով անարատ կ'ըլլայ. և հետեւաբար՝ առանց ուրիշ ու եւ միջոցի դիմելու, կրնայ ժամանակ մը անվթար կերպով պահուիլ, մի միայն լայտի, և սպիտակեան ազդեցութենէն զրկելով: Վերջոյ շեղ գործիքները հաստատուած են փեղրոնախոյոյս զօրութեան սկզբունքին վրայ, և հրապարակին վրայ կը ծախուին կեդրոնախոյոյս սերման (էքսէմէօզ ռանթրիֆիւժ), կեդրոնախոյոյս չճափան (տէլէքէօզ սանթրիֆիւժ), և ինչ, անուններով:

Երբ կարագը մածուկով պատրաստուի, ինչ որ սովորական է մեր գաւառներու մէջ, կաթնային չաքարին՝ թթւութիւն փոխուիլը աւելի շուտ և դիւրին կ'ըլլայ, քանի որ արդէն կաթը մածուկու համար, թթւութեան խորութիւնը մը հետեւանքով, իր մէջ գտնուած կաթի չաքարը թթւութեան վերածուած է: Հետեւաբար, մածուկով պատրաստուած կարագները, գրեթէ անկարելի կ'ըլլայ երկարատեւ տնվթար պահել, մանաւանդ՝ եթէ մաքրի (գոյուն): Կաթով պատրաստուած է, որովհետեւ՝ այս վերջինն իր մէջ մեծ քանակութեամբ կաթնային չաքար կը պարունակէ քան թէ կովու կաթ:

Հիմա ըսենք թէ՝ սովորական պարագայներու մէջ կարագի մէջ գտնուած շիճուկը ինչպէս կը դատեն: Կարագը խնոցին (հասըգ) մէջ պատրաստուելէն վերջ, դնելու է տաշտի (թէքնէ) կամ ու եւ յարմար ամանի մը մէջ, և որչափ կարելի է, պղծ և մաքուր ջուրով լուայու է, շարունակ հացի խմոր թրելու պէս թրելով, մինչև որ իրմէ քամուած ջուրը պարզ և ջինջ դուրս ելլայ:

Չի մոռնանք անցողակի յիշելու թէ, եթէ դանիական կոչուած խնոցիներու մէջ սերը ծեծուի՝ կարագ չինելու համար, և 12—14 հարւարադի (սանդիկրատ) աստիճան պազութեան մէջ, և երբ կարագի հատիկները մարգարտի խոշորութեամբ կազմուելով շիճուկին երեսը ելլեն խնոցին մէջ, և այն ա-

տեն դործողութիւնը դադարեցնելով առատ, մաքուր և պաղ ջրով լուայէ հաքը թրուի, գրեթէ աննշան քանակութեամբ շիճուկ կը պարունակէ իր մէջ, հետևաբար և՛ քիչ շատ անարատ ըլլալով, կրնայ ժամանակ մը թարմ պահուիլ:

Կարագը այսպէս լու մը թրելով՝ շիճուկը իր մէջէն դատելէն վերջը, տաճուկ լաթի մը մէջ առնելով, ըստ կարելոյն ճնշելով, իր մէջ մնացած ջուրը քամելով չորցնելու է: Ահա այս կերպով ըստ կարելոյն առաջին պայմանը լրացուցած կ'ըլլանք:

Եթէ կարագը մէկ քանի օրեր թարմ պահելու չի, վերջոյ շեղ գործողութիւնները կատարելէ վերջ, զով և մութ տեղ մը պահելու է. և պահուած տեղը որչափ պաղ ըլլայ, այնչափ երկարատեւ թարմ կը մնայ. իսկ օդի ազդեցութենէն զերծ պահելու համար, սկահակներու (քեստէ) մէջ կաղապարելէ վերջ՝ կարագը, մեծ կակ ամանի մը մէջ դնելու է, վրայէն քիչ մը ճնշելով, որպէս զի ամանին յատակը փակչի, վրան պաղ և նաքուր ջուր լեցնելու է, և ամէն օր ջուրը փոխելու է: Բայց այս միջոցներով առ առաւելն մէկ ամիս միայն կրնաք պահել կարագը, քանի որ անկարելի է ամբողջովին օդի ազդեցութենէն ազատել զայն, որու մէջ գտնուած մանրէները, ինչպէս և ջուրին մէջ գտնուածները, շարունակ գուն պիտի գործեն խորութեամբ յառաջ բերելու, բացի այն պարագայէն, յորում կարող ըլլաք սառի մէջ պահել:

Շար.

Ղ. ԲՈՒԱՏ

ԽՈՇԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

Նախորդ թւոյն մէջ մեր ուշադրութենէն վրիպած էր Մէլէնկի ընդհանուր պատրաստութեան սա եղանակը, որ գրեթէ յաճողալու միակ միջոցն է, որ ահաւաստիկ հոսիքի ճերմկուցը ձիւնի պէս լաւ մը փոփոխութենէն վերջը, ուրիշ մէկը կամաց կամաց և քիչ քիչ փոփոխած չաքարը ցանկու է ճերմկուցի փոփոխութիւն վրայ, և միւսայն ատեն փոք-

փութեանը փութեանը շարունակելու է անդամար:

ՊԻՍՏԱԿԱՆԱՌՆ ՄԷՌԵՆԿ

Առէք 50 տրամ պիստակ (չան ֆրանկ) ջուրի մէջ լեցուցէք, խառնեցէք մէկ երկու անգամ, հանեցէք ջուրէն և կեղեկեցէք: Ջեռոցի վրայ չորացնելով, սանդի (հալման) մը մէջ լեցուցէք ու վրան հաւկիթի ձերմկուց սրակելով ծեծեցէք, մինչև որ խիւսի (մաճուն) վերածուի: Առէք հիմա 6 հաւկիթի ձերմկուցը, աղէկ մը փրփուրացէք, և աւելցուցէք 6 դգալ փոշիացած չաքար, ոչ այդ խառնուրդը դրէք 1—2 վայրկեան տաք մոխրի վրայ, և երբեմն ետ առէք միշտ խառնելով: Լեցուցէք վրան պիստակի խմորը և խառնեցէք մինչև որ հաւասարին. յետոյ, դգալով մ'առէք խմորէն, և թղթով ծածկուած ափսէի մը վրայ լեցուցէք՝ որ կէս հաւկիթի ձեւը կ'առնէ. կրկին խմորէն առնելով՝ 2 հարմար հեռաւորութեամբ լեցուցէք, որ խմորները իրարու չի կցուին, և այսպէս շարունակաբար՝ մինչև որ խմորը լըմնայ:

Շաքարը փոշիացուցէք, չարմաղէ (պիւրիւնձիկէ կամ մետաքսէ շինուած մայ) անցուցէք ու մէռէնկներուն վրայ ցանեցէք, և կամայ մը փուռի մէջ եփեցէք: Երբոր եփին, դանակին ծայրովը մի առ մի հանեցէք թղթին վրայէն, և մալի վրայ շարելով, ջեռոցի մէջ չորացուցէք. խի եթէ ջեռոց չունիք, այն առանձին մետաղոտայնէ (թէլ քաֆէս) շինուած մալի վրայ շարեցէք, վրան գտցելով մաղմաղ կրակի վրայ դրէք որ չորնան, բայց մերթ ընդ մերթ նայեցէք որ չայրին:

ՍԵՐՈՒՑԻ ՄԷՌԵՆԿ

Սերուցով մէռէնկ շինելու համար, պէտք է առնել, 2 հաւկիթի ձերմկուցը, և փոշիացած պտղունց մը գաղի խէժ (քիթրէ): Լաւ մը փրփուրացնելով՝ լեցուցէք վրան 17 տրամ փոշիացած չաքար, և քիչ մը լիմոնի արտակեղև, որ սլէտք է քերոցէ անցուած ըլլայ. այս ամէնը 10 վայրկեանի չափ զարկէք, նախորդ թւոյն մէջ յիշուած մէռէնկին նման պատրաստելով՝ (բայց ոչ խոտկանին) վերոյիշեալ խիւսը մէջը լեցուցէք — անշուշտ առածին չափ—և հաւկիթի ձերմկուցով եր-

կուք իրար փակցնելով հրամցուցէք: Խի եթէ կ'ուզէք որ ձեր այդ պտղունցը վարդադոյն ըլլայ, առիւտին հաւկիթը ևլն. չի վարկած, աւրձի դգալ մը նարնջի ծաղիկներով մէջ քիչ մը ներկ հալեցուցէք և յետոյ զարկէք: Շաքարայով խառն քուժ պատրաստել եթէ ուզէք, գործածած չաքարնուր կէսը պէտք է փոշիացած չաքար ըլլայ:

ՆՇԱՆԱՌՆ ՄԷՌԵՆԿ

Նշախառն մէռէնկը շինելու համար նախ պէտք է հետեւեալ խառնուրդը պատրաստել. 20 տրամ նուշը տաք ջուրի մէջ ձգելով կեղևները հանեցէք, և աւելցուցէք 5 հատ լեզի նուշ (աճը պատեմ), որ նոյնպէս պէտք է կեղևած ըլլայ, դրէք սանդի մը մէջ ու լաւ մը ծեծեցէք: Քիչ մը կաթ, չաքար, և քիչ մ'ալ քերոցէ անցուած լիմոնի արտակեղևը եռացուցէք, վնար առէք, և երբ գաղջ վիճակի մէջ ըլլայ, լեցուցէք վրան նուշերը և 6 հաւկիթի դեղնուց, պարզուած անցընելով մաղմաղ կրակի վրայ եփեցէք:

Այժմ պատրաստեցէք մէռէնկը նախորդ թւոյն մէջ յիշուած կերպով, որուն խորագիրը սապէս գրուած էր «Մէռէնկի ընդհանուր պատրաստութիւնը», և իրենց մէջ լեցուցէք վերոյիշեալ նշախառն սերուցէն: Սկահակի (քեռակ) մը մէջ դրէք 3 հաւկիթի ձերմկուցը. փրփուրացուցէք և չարմաղէ անցուած 19—20 տրամ չաքար ու քիչ մ'ալ քերոցէ անցուած լիմոնի արտակեղև աւելցուցէք: Կրկին զարկէք (յոգնելու չի գար) եւ լեցուցէք ձեր մէռէնկներուն վրայ, ուր առաջուց լեցուցած էիք նշախառն սերուցը, որով ձեր մէռէնկը կէս լիմոնի ձեւը կ'առնէ: Առաջուց ափսէի մը մէջ ցանեցէք քիչ մը ալիւր, և մէռէնկները մի առ մի պետեղեցէք մէյմէկ քիչ հեռաւորութեամբ, և վրան խիստ բարակ չաքար ցանեցէք: Դրէք հիմա ափսէն սանի մը վրայ, ու այդ սանիով խիստ կամայ փուռի մէջ եփեցէք (առաջուց մէռէնկները արդէն եփուած ըլլալուն՝ զգուշացէք որ չայրին) և հրամցուցէք:

ՏԱՆՏԻԿԻՆԸ

ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԽՆԴԻՐ ԻԴ.

Գիւղի մը բնակիչներն 750 են, անհատի մը օրական նոյն պիտոյից համար վիճին հաշուով 10 օրա ջուր պէտք է. ջրամբար մը շինել կ'ուզեն որ կարենայ 15 օրուան համար պէտք եղած ջուրը պարունակել, շինուելիք ջրամբարին խորիւրդը նանոնաւոր բազմանիւն պիտի ըլլայ՝ փերաքանչիւր կողմը 1.4 մէթր (նէրսի կողմէն) և անկիւնին չափը 140 տոնիսան, ջրամբարը ո՛րչափ բարձրութիւն ունենալու է:

Տ. ՊՕԶԱՃԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

Եգիպտոսի նախկին վարչապետը և Հայ կարող դիւանագէտը, Նուպար փաշա, կիրակի օր մեռաւ Բարիզ, ուր ժամանակէ մի վեր քաջուած կ'ապրէր: Եգիպտոսի ժամանակակից պատմութեան մէջ Նուպար փաշա շատ կարեւոր դերեր կատարած է թէ՛ իւր վարչագէտ, թէ՛ իւր երմտական ու դիւանագիտական մարդ: Եգիպտոս շատ կը պարտի անոր. իրարու յաջորդող խորհուրդը յանձին Հայ վարչագէտին ունեցած են իրենց կորովի զօրավիգը, երկրին զարգացման մէջ:

Նշանաւոր վարչագէտը ծնած էր Իզմիր 1825ին, հետեւաբար 73 տարեկան էր. պատանի էր երբ Բարիզ գնաց. սակայն ատեն մը հոն մնալէն ետքը, Թուլուզ անցաւ, ուր տեղին ֆրանսական վարժարանին մէջ դաստիարակուեցաւ: Վարժարանին ջրջանը շատ փայլուն կերպով աւարտեց, առաջին հանդիսանալով ուսմանց մէջ: 1842ին Եգիպտոս գնաց, ուր քարտուղար եղաւ իր ազգականներէն Պօլոս պէյի ջով, որ այն թուականին Եգիպտոսի Աւեստական և Արտաքին գործոց նախարար էր: Երկու տարի յետոյ, ինքնով Մէհմէտ Ալի Փաշայի երկրորդ թարգմանի պաշտօնին կոչուեցաւ, և անոր մահէն ետքը Ա. թարգման եղաւ Իպրահիմ փաշայի, որուն ընկերացաւ Կ. Պոլիս ու Եւրոպա ըրած ուղևորութեանց պահուն: Նուպար փաշա այդ պաշտօնը պահեց նաև Ապպաս փաշայի ինք-

նիւթութեան օրով: Ապպաս փաշայի մահէն յետոյ՝ անոր յաջորդ Սաիտ փաշայի անձնական քարտուղարը եղաւ. բայց քիչ յետոյ Եգիպտոսի Երկաթուղիներուն ընդէ. Տիօրէն կարգուեցաւ: 1862ին Նուպար փաշա Եգիպտոսի յարկուեցաւ՝ կնքելու համար Եգիպտոսի արձալին փոխառութիւնը. Հայ վարչապետը նախապատուութիւն տուաւ ֆրանսական առաջնորդին՝ քան թէ անգլիականին, աս պատճառով Նուպար փաշա սկսաւ քննադատուիլ բուն կերպով: Այդ ջրջանին երկրին առեւտրական զարգացման ալ մեծ զարկ տուաւ Նուպար փաշա՝ Աղեքսանդրիայէն Սիւէզ երկաթուղիին գծին շինութիւնը փութացնելով, որ ապրանքները զիւրութեամբ ու շուտ փոխադրուելուն նպատեց մեծ ապէս:

Խորով Իսմայիլ փաշայի օրով, յատկէ պաշտօնով Պոլիս եկաւ Սիւէզի ջրանցքի բացման համար խորհրդակցութիւններ կատարելու. և Եգիպտոս վերադարձին Փաշայութեան աստիճանին բարձրացաւ: Այնուհետեւ Բարիզ գնաց հարթելու համար այն անհամապատասխանները, որոնք ջրանցքի ընկերութեան և խորհրդութեան մէջ ծագած էին: Խորհրդութիւնը և Անգլիացիք այլեայլ դժուարութիւններ ու խոչընդոտներ կը յարուցանէին Սիւէզի ջրանցքին բացման համար. որովհետեւ Անգլիացիք բացէ ի բաց վտանգ մը կը տեսնէին իրենց համար ֆրանսական այդ հսկայ տաճարիկին իրանդարման մէջ: Նուպար փաշա այս դժուարին կացութեան մէջ գիւցաւ իր կողմի, հեռատես ու ճարտիկ դիւանագէտի տաղանդներն ի յայտ բերել ինքնուր, թէ և անգլիացիներուն կուսակից բաւբասուեցաւ. խնդիրը հոտ չէր, բաւ էր որ երկիրը այդ ջրանցքին բացումովը անտեսական մեծ զարգացում ստացաւ:

Նուպար փաշայի դիւանագիտական կեանքին նշանաւոր գործերուն մէջ առաջին տեղ կը բռնէ Եգիպտոսի դատական վերակազմութեան գործը: 1867ին Եգիպտոսի դատական դործերը շատ խառնակ էին. բազմաթիւ հիւպատոսական դատարաններ ու բնիկ անկարող դատաւորներ կային: Նուպար փաշա հիւպատոսական իրաւասութեանց չարաչար գործածման դէմ բողոք բառնալով՝ առաջարկեց իսուն Դատարաններու գրութիւնը: Այս առաջարկը երկար խորհրդակցութիւններէ, վիճաբանութիւններէ յետոյ՝ ընդունուեցաւ՝ և հաստատուեցաւ՝ շնորհիւ Նուպար փաշայի վարչական ու օրէնսդիտական կարողութեանց:

1866էն յետոյ երկար ատեն արտաքին

գործոց ու նախարարապետի պաշտօնները վարեց, իր դիւանագէտի բարձր կարողութիւնները փայլեցնելով: Նախորդ խորհրդով Փիդ փաշայի և արդի խորհրդ Ասպլաւ փաշայի որով ալ Նուպար փաշա յաջորդարար վարեց նախարարապետի պաշտօնը մինչև 1895: Այդ թուականին ալ վերջնապէս քաշուեցաւ ասպարէզէն ու Բարիզ գնաց հանգիստ առնելու:

Իր բնկերային, բարոյական մարդ, Նուպար փաշա շատ բարձր ձիրքերով օժտուած էր. սոսկմիկ գգացումները չէին մարած իր մէջ. ազգային շրջանակի մէջ համակրելի դէմք մը ճանչցուած էր իրաւամբ: Իր կեանքին վերջերը Բարիզի մէջ լիարուռն կը նպաստէր հայ կարօտ ուսանողներու և ամէն կարգի կապանքներու հետ ջերմագին կը սիրէր հայ գրականութիւնը, որուն կը նպաստէր միշտ: Չնկունաբ ըսել որ Նուպար փաշա արևելեան ու եւրոպական 5—6 լեզուներու տեղեակ և ընդհանուր հմտութեան տէր անձնաւորութիւն մըն էր:

ՆՇԱՆԱԽՍՍՈՒԹԻՒՆ

Հանրագիտակի յարգոյ աշխատակից Ա. Գ. Տ. Ք. Յ. Սալուտալեան, որ հայ բժշկութեան ճարտար և համբաւաւոր դասին կը վերաբերի, իրեն հրապարակագիր ոչ միայն Հանրագիտակի ընթերցողաց, այլ նաև ընդհ. հայ մամուլին մէջ իր հմտալից գրութիւններով և գրական աշխատութիւններով ալ ծանօթ դէմք մըն է, կազանդին օրն իսկ նշանուեր է Մանիսացի պատուաւոր և զանազան գերդաստանի շառաւիղներէն նուազ փայլ Օրդս Էփանդիայի, որ իր ընտելագոյն ձիրքերով հայ իգական սեռի սրտին կը բերէ:

Հանրագիտակի այս տութիւն իր սիրտագին շնորհաւորութիւնները ներկայելով իր համակրելի աշխատակցին, կը մաղթէ որ ժամ առաջ իրենց միութիւնով գտն յաւելուլ հայ պատուաւոր ընտանեաց շարքին վրայ երջանկաւոր տիպար բոյնի մը, որու մէջ սէրը տիրէ՝ ուրիշ և ճառագայթեն հանրութեան օգտակար ջանաւորներ:

ԳՐԱՆԻ ՅՈՒՇԱՏԵՏՐ-ՕՐԱՅՈՅՑ

1899 ՏԱՐԻՈՅ

Հրատարակուած է Զ. Թորոսեան է-

Ֆէնտիի հեղինակած Գրականի Յուշատետր-Օրացոյցը, որ բացի պարզ Օրացոյցէ, իր մէջ կը պարունակէ կարգ մը օգտակար գիտելիքներ, առօրեայ կեանքի մէջ անմիջական պէտքերու գոհացում տալու ամէն կարգի գործի տէր մարդոց համար:

Կը գտնուի կալաթա Վրոյր և Ընկ. Թղթափաճառանոցը, և Պոլիս հայ գրականաւորուն քով, ինչպէս նաև իր կեդրոնատեղին Վալիտէ խան: Նոյնպէս եւ Հանրագիտակի խմբագրատունը:

Գին՝ ընտիր լաթական 20 կէս զրուս—նոյնը ոսկեզօծ ճզաւանով, 5 զրուս, կաշեկազմ ճզաւանով 70 կէս զրուս—նոյնը ընտիր թղթով 120 կէս զրուս—փրղոսկրէ կողքով 20 զրուս—Շատ գնողներուն մեծ զեղջ—Նախորդ տարիներուն կը ծախուի հատը 40 փարայ:

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Ի դիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կ'ստորագրէ մի միայն Տնօրէն-Խմբագրապետ Զ. ԲՈՂԱՏ, որոնք դիմել պէտք է, առանց բացատրութեան, թերթիս վերաբերեալ ամէն գործառնութեանց համար:

در علیّه ده بفتح قوسئده اسکی ضبطیه
۱۹ نومرو لی دکانه «مجموعه علوم» غزیه سی
سر محرری (بولاد) افندی به

Զ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ
«ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղլէ-Գափու
Մթամպուլ
H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK,"
19. Rue Eski-Zabtiş Bahdjé-Kapou. 19
Stamboul

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ



ՀԱՃՈՅՔ ՍԸ

ՈՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԿՐ ՊԱՏՃԱՌԻ

Ճշմարիտ հաճոյքն այն է որ, ախորժելի ժա-
մանց մը ընծայելով հանդերձ, առողջութեան
ալ մեծապէս կ'օգնէ: Ներկայ դարուս մէջ հա-
ճոյքի նիւթերը բարձրագոյն են. սովորեալ զար-
գացած ազգերը ամենէն աւելի Թէթին նա-
խապատուութիւնն կուտան, անոր համար որ
այս թանկագին ըմպելիին ամենածանր յոգ-
նութիւնները չուտով կ'անցնէ: Եւ նոր կարող
կը ներշնչէ, մարդուս ձգած աշխատութիւնը
վերականգնուի: Չմեղք արիւնը տաքցնելով, մար-
տիկը ցորտին դէմ կը պաշտպանէ՝ տմառն
ալ զովութիւնն բնծայելով, շատ մը հիւան-
դութեանց առաջըր կ'առնէ: Խնամով պատ-
մաստուած գաւաթ մը թէյը, նոյնչափ մաք-
ըտի հաւատարմանը կը պարունակէ և իր
անբաղդատելի ամենութեամբ կատարեալ նա-
խախնամութիւնն արն է մարդկութեան համար:
Սակայն աւա՛ղ որ Թէթ անուամբ ծախուած-
ներու մեծագոյն մասը խարդախուած ըլլա-
լով, դուրսէն այս առաւելութիւններէն և վա-
նոնք ճանչնալն շատ դժուար է, ուստի անոնք
որ կը փափաքին ԸՆՏԻՐ, ԱՆԽԱՐԴԱՆ, և միւ-
նոյն ատեն ԱՅԱՆ Թէյ խմել, պէտք է ԿՀ
ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿԵՐՑ
թէյերը գործածեն. ուշադրութեամբ վերնո-
ւելով անոնց անունն ու մասնաւոր տու-
րու վրայ: Որովհետեւ թէյն այս մեծ վաճա-
ռատուն, իւր երկարամեայ փորձառութեամբ,
արեւելեան երկիրներէ մեծաքանակ թէյ տը-
տածելուն և ահագին ապրանքներ սպառելուն
շնորհիւ, միշտ անխարդախ թէյ կը ծախէ
ԱՆՄՐՏԵԼԻ գիներով: Ընկերութեան Կեդրո-
նատեղին է Կ. Պոլս, ձէլալ Գէյ խան, թիւ 10:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ կը ծանու-
ցանէ թէ Մանկավարժական Գերականու-
թեան Գ. մասը տպագրութեան յանձ-
նուած է:

Մայիս-երաշափթ-Սիւթէմի Գաղղիե-
րէն մասի ԺԱ. տետրը հրատարակուած
է և բաժանորդագրութիւնը փակուած է:
Գին 12 տետրերու 25 դրուշ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլսոյ եւ Գաղղիաց համար	
Հանրագիտակ տարեկան	50 դր.
» Վայելչազարդութեան	
բաժինով	80 »
Հանրագիտակ միայն Վայելչազարդու- թեան բաժինն	60 »
Հանրագիտակ Վայելչազարդութեան բաժին գունաւոր եւ մեծադիր 36 պատկերներով	110 »
Արշաւաւանդի համար	
Հանրագիտակ տարեկան	15 ֆր.
» Վայելչազարդութեան	
բաժինով	20 »
Հանրագիտակ միայն Վայելչազարդու- թեան բաժին	16 »
Հանրագիտակ Վայելչազարդութեան բաժին գունաւոր եւ մեծադիր 36 պատկերներով	25 »

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ
ՎԱՅԵԼՉԱԶԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԵՆ

Դ. ԲՈԼՍ

Խմբագրապետ Հանրագիտակ Հանդէսի

թիւ 19 էսկի-Զապթէյէ

Կ. Պոլս

Տէր.

Գնահատելով Ձեր հանրագում ձեռնարկը,
հաճեցէք զիս բաժանորդ արձանագրել թեր-
թիւ Վայելչազարդութեան բաժնին
և

Ստորագրութիւն
(Ընթերցողի)

1898

Բնակութեան տեղ

Հասցէ

ՄԵՍ ՄՅԵԱ ՈՅ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. ՊՈԼԻՍ, ՖԵՏԷԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամեն տեսակ թարմ դեղորայք. վիրաբուժական գործիքներ, Անգղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, գօնեակներ, չինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով: Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացրելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց

կը ղրկեն դեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

Շատեր այնպէս կը հաւատան թէ Պոլսոյ հրապարակին վրայ ՃՇՄԱՐԻՏ և ԱՆԽԱՐԴԱԽ Մօռիւ ձկան իւղ չի գտնուիր. այս կարծիքը շատ սխալ է. պէտք ունեցողները թող դիմեն Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Տեարց Դեղորէից վաճառատունը, Ֆընտզեան Խանի տակ Թիւ 3, ուր պիտի գտնեն ուղղակի Նորվեգիայէն բերել սրուած ամենալնտիր ձկան իւղի տեսակներ. Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառումներ կ'ըլլան խիստ զիւրամատչելի գներով:



ԳՈՐԾԱԿԱԼԻ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Ասա-բազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
Արաբկիր — Գ. Տէվէճեան էֆ.
Էրզրում — Եղ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բաբարեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճանեան
Իզմիս — Աբրահամ էֆ. Կ. Կտաճեան
Մալկարա — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան
Խարբերդ — Ոստրով էֆ. Քէչիչեան
Թրեպոնի. — Գալուստ էֆ. Գըլըճեան
Սինոպ. — Յ. էֆ. Պետրոսեան

Կիւսադն. — Արմենակ էֆ. Սօմունճեան
Մարա — Արթ. Տ. Յովհաննէս քահանայ

Վարժապետեան



Մարա — Մարա էֆ. Բոլատեան
Մարա — Մարա էֆ. Ս. Մսերեան
Մարա — Մարա էֆ. Գարակէօղեան
Մարա — Մարա էֆ. Էթմէքճեան
Մարա — Մարա էֆ. Տէր-Յովսէփեան
Մարա — Մարա էֆ. Էրկանեան
Աֆիոն-Գարա-Հիսար. — Արտաշէս էֆ. Հալսլեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մագրի-Գիւղ, Պօղոս էֆ. Ազնաւորեանի խանութը.
Գատը-Գիւղ, Լեւոն էֆ. Զպուքճեան Դեղարանը.
Բերա, Դեծ փողոց Գառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: